ՄՆԴ/2296/04/25 գործով Սերգեյ Դալլաքյանի գույքի աճուրդի կազմակերպման և անցկացման մասին

2026-11-27 09:01:00

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

18.12.2026թ. ժամը 15:00 ին ՀՀ ք.Երևան Վարշավյան 2, 17 հասցեում տեղի կունենա սնանկ ճանաչված Սերգեյ Դալլաքյանի պարտավորությունների համար գրավադրված սեփականության իրավունքով Սերգեյ Դալլաքյանին պատկանող գույքի /ոսկյա ամուսնական մատանի 2,9գրամ, 900 հարգի/ աճուրդ-վաճառքը հրապարակային սակարկությամբ, բաց դասական եղանակով՝ 1 առանձին լոտով։
Լոտ 1. ամուսնական մատանի 2,9գրամ, 900 հարգի ։
Լոտը իրենից ներկայացնում է ամուսնական մատանի 2,9 գրամ, 900 հարգի։
Գտնվում է Արդշինբանկ ՓԲԸ Ավան մասնաճյուղում՝ ՀՀ ք.Երևան, Իսահակյան թաղամաս 25/3 հասցեում։
Մեկնարկային գին՝ 158.600 ՀՀ դրամ։
Աճուրդին մասնակցելու համար ցանկացողները պետք է ներկայացնեն աճուրդի մասնակացության հայտ, որին կից՝
ա) ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճեն, անհատ ձեռնարկատեր հայտատուների դեպքում՝ պետական հաշվառումը հավաստող փաստաթղթի և անձը հաստատող փաստաթղթի պատճենները, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների և իրավաբանական անձանց դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթի և կանոնադրության, ինչպես նաև իրավաբանական անձի և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենները, լիազորագիր, եթե հայտատուն հանդես է գալիս լիազորված անձի միջոցով,
բ) աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթերը։
Աճուրդի մասնակից չհամարվող անձինք պետք է ներկայացնեն ծանուցում, որին կից.
ա) ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճեն, անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների և իրավաբանական անձանց դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի և կանոնադրության

պատճենները, լիազորագիր, եթե աճուրդի մասնակից չհամարվող անձը հանդես է գալիս լիազորված անձի միջոցով:
Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար, ովքեր ցանկություն ունեն ներկա գտնվել աճուրդին, սահմանվում է մուտքի վճար, որի չափը կազմում է 5.000 ՀՀ դրամ:
Աճուրդի մասնակցության վճարը լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով, իսկ նախավճարը՝ 5%-ի չափով, մինչև հայտի ներկայացման պահը պետք է վճարվեն պարտապանի սնանկության հատուկ հաշվին:
Աճուրդի մասնակցության վճարը և նախավճարը, աճուրդի մասնակից չհամարվող անձանց մուտքի վճարը վճարվում են փոխանցումով պարտապան Սերգեյ Դալլաքյանի անվամբ <<ԱՅԴԻ ԲԱՆԿ>> ՓԲԸ-ում գործող թիվ 11807070782300 սնանկության հատուկ հաշվին մինչև աճուրդին նախորդող 5-րդ օրը ներառյալ:
Աճուրդին մասնակցել ցանկացողները, ինչպես նաև աճուրդի մասնակից չհամարվող անձինք սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչև աճուրդին նախորդող 5-րդ օրվա ժամը 16:00-ն կարող են.
աճուրդի մասնակցել ցանկացողները՝ հայտ ներկայացնել, իսկ աճուրդի մասնակից չհամարվող անձինք՝ ծանուցում ներկայացնել ՀՀ սնանկության դատարան (ՀՀ ք.Գյումրի, Անկախության հրապարակ 7):
Հայտ և ծանուցում ներկայացրած մասնակիցները աճուրդին պետք է ներկայանան անձը հաստատող փաստաթղթով, իսկ լիազորված անձի մասնակցության դեպքում՝ լիազորությունները հաստատող (հավաստող) պատշաճ վավերացված փաստաթղթով՝ լիազորագրով:
Աճուրդն անցկացվում է բաց դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:
Աճուրդում հաղթած մասնակիցը պարտավոր է աճուրդն անցկացնելու օրվանից՝ աճուրդի արդյունքների վերաբերյալ համապատասխան արձանագրության հիման վրա, տաս օրվա ընթացքում պարտապանի սնանկության հատուկ հաշվին վճարել լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախավճարը: Նշված ժամկետում վաճառքի գինն ամբողջությամբ չվճարելու դեպքում աճուրդը համարվում է չկայացած, իսկ աճուրդի հաղթողի կողմից վճարված նախավճարը և մասնակցության վճարը չեն վերադարձվում:
Գույքի առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու, նախկին սեփականատերերի, ինչպես նաև փաստացի բնակվողների վտարումը և պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ այլ (ցանկացած տեսակի) ծախսերը և գործողությունները կատարվում են աճուրդի հաղթող ճանաչված մասնակցի կողմից՝ իր միջոցներով:
Լոտի ուսումնասիրությունների և աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար մասնակիցները մինչև 12.12.2026թ. ժամը 16:00 կարող են զանգահարել

սնանկության գործով կառավարիչ՝ Տ.Ստեփանյանին
հեռ. 033800099:

Լոտ.pdf

37433800099

uls.bankruptcymanager@gmail.com

Երևան, Վարշավյան 2, 17